№ 199 Հոկտեմբերի 27 (Նոյեմբերի 8) 1881 Հոկտեմբերի 27 (Նոյեմբերի 8) № 199

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են մինչեայն խմբագրատան մէջ։

Ուսարարարարացիր դիմում են ս զդակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Շամախուց։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Խմբագրական յօդուած «Թայմզի»։ Կ. Պոլսի Ազգային ժողով։ Մի ցաւով պակաս։ Նամակ Թիւրքիայից։ — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Մի նոր գիրք։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

—

Հոկտեմբերի 14-ին

Շամախում մարդ որքան ցանկանայ, որ մի ընտանեկան, ազգային և կամ առհասարակ հասարակական գործում տեսնի խաղաղ, կանոնաւոր ընթացք, նոյնքան նա համոզված պիտի լինի, որ դա անկարելի բան է նրա համար շամախեցոց կողմից։ «Մշակի» գոյութեան օրից Շամախուց քիչ նամակներ չեն տպված այդ լրագրի էջերում, քիչ չէ քարոզ կարդացվել քաղաքացոց գլխին, քիչ չեն յայտնված նրանց խոչոր պակասութիւնները, քիչ չեն հրաւիրված նրանք, որ քանի ժամանակը ուշ չէ, աշխատեն ետ չը մնալ այլ քաղաքների առաջադէմ հասարակութիւններից, սակայն բոլորը եղել են ի զուր աշխատանք։ Այդ նամակները, ինչպէս և այժմս է, եղել են փողոցներում և հացկերոյթներում զուարճախօսութեան առարկայ, ոչ ով չէ կամեցել և չէ էլ կամենում մինչև այսօրս անգամ, մտածել շատ թէ քիչ այն նամակներում իրանց վրա գրած պակասութիւնների մասին, մի խօսքով չեն աշխատում դրստվել և բարոք են համարում հին, նահապետական մարդավարութեան մէջ ապրել։ Սրան լաւ ապացոյց կարող է լինել այն, որ ոչ մի ժամանակ չես տեսնի նրանց որ նրանք կարդալիս լինեն «Մշակի» առաջնորդող յօդուածները, դուրս բերեն նրանցից իրանց ուղղութեան համար հարիւրաւոր լաւ օգտաւէտ մտքեր, գործ դնեն այդ յօդուածների մէջ գրված ընտիր, ճըշմարիտ, անկեղծ, անշահասէր խորհուրդները իրանց կեանքի բարօրութեան համար, այդ շնորհալի խորհուրդներից իրանց համար մտքի պակաս պատրաստեն, չէք տեսնի որ այդ հասարակութեան անդամներից շատերը, բացի մի քանիներից, հետաքրքրվեն կարդալ պ. պ. Դ. Նիկողոսեանի, Բաֆֆիի, Մէլիք-Բէգլարեանի, Եաղուբեանի, Արմենակի, Հայկակի և շատ ուրիշ ազնիւ երիտասարդների բնագրու յօդուածները, զրպարտութեան տեղ զրուցեն այդ շնորհալի յօդուածների վրա, օգուտ քաղեն նրանցից։ Միով բանիւ մարդս ապշած է մնում, երբ նայում է նրանց սառնասրտութեան, անտարբերութեան և անզգայութեան վրա դէպի լաւը, հեզը, բարին, օգտաւէտը։ Զրպարտութիւնները և բամբասանքը մենք հայերս այնքան սիրում ենք, որ ամեն փոստով հայ լրագիրներում պարսաւող նամակների ենք սպասում և եթէ մի փոստ անցնում է և ոչինչ սրա նման չէ լինում, յայնժամ շատ տխուր ենք լինում, և ասում ենք՝ «Մշակում» կամ «Մեղուի» մէջ ուշադրութեան արժանի բան չը կայ։ Շամախում 846 տուն հայ բնակիչ կայ, որոնք չունեն ոչինչ կարօտութիւն առաջադիմութեան մէջ, այլ մենք ընդունակ ենք միայն բամբասանքներով պարապել, ուրիշ ոչինչով։ Վերջացնելով նամակս պիտի խոստովանվեմ, որ մի տասը տարի էլ կանցնի և մենք, շամախեցի հայերս ոչինչ քայլ չենք անի առաջադիմութեան մէջ և այն ժամանակ մեր սերունդը կը դատապարտէ մեզ մեր անհոգութեան համար։ Աշխատենք ուրեմն քանի ուշ չէ։

Ա. Մէլիք-Շահնազարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ստացանք ԲԱԹՈՒՄԻՑ պ. Արշակ Ծատուրեանցից 4 ռուբլի բաժանորդագին Վիէննայի «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի։ Առաջվայ փողերի հետ կանի 1126 ռուբլի 53 կոպէկ։

—

Կ. Պոլսի «Մասիս» լրագրի 7 հոկտեմբերի համարի մէջ կարդում ենք հետեւեալ հարցումը դէպի մեզ ուղղված։ «Պատուական Մշակիդ Ներկայ տարվայ յունվար 10 թուոյն մէջ 94 ռուբլի և 18 կոպէկի գումար մը յիշված է Զուղայէն ղրկված. կը խնդրեմ որ հաճիք իմանալ և ծանուցանել թէ այն գումարն ուր մնացած է կամ ում յանձնված, որովհետև դորա մէջ 43 ռուբլիի (հինգ օսմանեան լիրա) գումար մը կայ, զոր Պարսկաստանի և Հնդկաստանի գեր. առաջնորդն ուղարկած է ի հաշիւ բաժանորդագրութեան «Մասիսի,» և մինչև այսօր մեր ձեռք չէ հասած։» Պ. Իսթիւճեանի այդ հարցմանը մենք միայն այսքան կարող ենք պատասխանել։ «Մշակի» յունվար 10 համարի մէջ (№ 2 Ներկայ 1881 թուի) մենք գտնում ենք հետեւեալ ներքին լուրը։ «Ստացանք պ. Տիգրան Տէր-Օհանեանցի ձեռքով 94 ր. 18 կոպ., որ հանգանակված է Սպահանի մէջ յօգուտ վանի սովատանջների։» Ուրեմն պ. Տիգրան Տէր-Օհանեանց, յանձնելով մեզ յիշեալ գումարը, ոչինչ չէր ասել մեզ թէ այդ գումարի մէջ կայ և «Մասիսի» բաժանորդական փողը. իսկ եթէ նա այդ իմանար, երևի մեզ կասէր։ Բայց որովհետև մեզ ոչինչ չասեց, մենք ամբողջ գումարը, ինչպէս և յայտնվեցաւ մեզ, յատկացրինք սովելոց գումարին։ Այժմ կը սպասենք պ. Տէր-Օհանեանցի բացատրութեանը։

—

Մեզ հաղորդում են հետեւեալը։ «Ձեր լրագրի անցեալ տարվայ համարներից մինի մէջ, յիշված էր որ յարգելի կոյս Մանէ Լ.օրիս-Մէլիքեան իր ծախսով բաւական մեծ տարածութիւնից Որնակ գիւղի բնակիչների համար բերել է տուել ջուր, բայց դժբաղդաբար այս գործի վրա կարգած հոգաբարձուների անհոգութեան պատճառով քանը մնացել է թերի, այնպէս որ այս տարի նոյն յարգելի կոյսը, գնալով յիշեալ գիւղը և տեսնելով որ իր բոլոր աշխատանքները և ծախսած փողերը զուր են անցել, սկսում է այժմ գործին ինքն ձեռք զարկել և իր վերակացութեամբ ու անխոնջ աշխատանքով աւարտել տալ նոյն աղբիւրի անցկացնելը, որի համար 1,000 ռուբլի ծախս և մեծ նեղութիւններ է կրել։ Կոյսի ջանքերը գնահատելով, Սահանի վանքի Վարդան եպիսկոպոսը վարձատրում է կոյսին ընծայելով նրան մի փրկչական քանդակագործ փայտեայ պատկեր, փչեայ պատկով, որ ինչպէս երևում է գտնված է եղել Ախուրեան գետի եզրին 1862 թուին։ Եպիսկոպոսի կարծիքով պատկերը պէտք է երրեմն հայերը գցած լինեն գետը, թշնամու երկիղից։ Պատկերը այժմ գտնվում է Թիֆլիսի հայոց կուսանաց եկեղեցում։»

—

ԳԱՆՁԱԿԻՑ մի պարոն գրում է մեզ։ «Սկսելով տիկին Ա. Ն. Աննենսկու «Братъ и Сестра» մանկական վէպի թարգմանութիւնը, պատիւ ունեմ սրա մասին յայտնել պ. պ. թարգմանիչներին։»

—

Պ. Վախտանգ Տէր-Մեսրոպեան խնդրում է մեզ յայտնել թարգմանիչներին, որ նա արդէն թարգմանել է «Уставъ Basa» մանկական վէպը, որ և շուտով լոյս կը տեսնի։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են։ «Հաստատ լուր է որ տէր Թադէոս Բուդաղեանց թողնում է կրօնաւորացի պաշտօնը, որ վարած է 20 տարվայ ընթացքում տեղիս ռէալական դպրոցում։ Աշակերտները երբէք գոհ չէին տէր հօր դասատուութիւնից։ Ցանկալի է որ Թադէոս քահանայի տեղ նշանակվի Խորէն Միրզաբէգեանց քահանան։ Սա իր համեստ բնաւորութեամբ յայտնի է ամենքին և որպէս փորձառու ուսուցիչ իր դասատուութեամբ մեծ օգուտ կարող է բերել մեր մանուկներին, թէ սովորեցնելով նրանց կրօնագիտութիւնը և թէ ձգելով նրանց մէջ սէր դէպի մայրենի լեզուն։»

—

ԹԻՖԼԻՍԻ բելգիական հիւպատոս պ. Բլոլ, խնդրում է մեզ տպել հետեւեալ ազդարարութիւնը։ «Նորին Մեծութեան բելգիացիների թագաւորի հրամանով, որ կայացաւ 14-ին դեկտեմբերի 1874 թուին, նշանակված է մի տարեկան մրցանակ 25 հազար ֆրանկ գումարի, մը-տաւոր աշխատանքները քաջալերելու նպատակով։ Մրցանակը վերաբերվելով միջազգային երկրորդ կոնկուրսի, կը տրվի 1885 թուին այն աշխատանքին, որ կը մշակի և կը զարգացնի ամենալաւ միջոցները և մեթոդները Աշխարհագրութեան ուսումնասիրութիւնը հեշտացնելու և այդ առարկայի դասատուութիւնը իրականացնելու այլ և այլ ասիճանների դըպրոցների մէջ։ Օտարները, որոնք կը կամենան մասնակցել այդ մրցանակին, պարտաւոր կը լինեն ուղարկել իրանց աշխատասիրութիւնը,

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ՆՈՐ ԳԻՐՔ

—

Երևանի «Պսակ» լրագրի տպարանից շատ ժամանակ չէ լոյս տեսաւ «Մարդակազմութիւն հայոց ուսումնարանների համար», գիրքը, աշխատասիրութիւն Երևանի քաղաքային բժիշկ Լեոն Տիգրանեանցի։ Այդ գրքի քննութիւնը խոստացել ենք մի անգամ ներկայացնել ընթերցողներին։ Ահա փորձում ենք։

Այդ դասագրքում ընդունված է ցուցական ձևը (սիստէմա), որով պէտք է ուսուցանել մարդակազմութիւնը գործնականապէս, այսինքն ցոյց տալով մարմնի իւրաքանչիւր մասը։ Մարմնի այն մասերը, որոնց չէ կարելի ցոյց տալ կենդանի մարդու վրա (մկանները, ներքին գործարանները, նեարդները և այլն), բժիշկը այնպէս է նկարագրում, որ կարելի է անասունների վրա ցոյց տալ հարկաւոր մասերը, նմանապէս բացատրում է թէ ինչպէս պէտք է պատրաստել միկրոսկոպիական պրէպարատները, որ կարելի լինի, հարկաւոր ժամանակ, ծանօթացնել աշակերտներին մարմնի մանրամասնութիւնների—միկրոսկոպիական անատոմիայի հետ։

Բժիշկն աշխատել է, ինչպէս երևում է, ջոկել անատոմիան ֆիզիոլոգիայից, որովհետև եթէ միացնենք են (ինչպէս շատերն անում են) այդ երկու միմեանց հետ շատ սերտ կապված գիտութիւնները, այն ժամանակ աշակերտները չը կարողանալով զանազանել անատոմիականը ֆիզիոլոգիականից, պէտք է իրանց գլխում կազմին խառնափնթոր դաղափարներ և պատկերներ թէ անատոմիայի և թէ ֆիզիոլոգիայի փաստերի մասին։ Այդ երկու գիտութիւնները պէտք է միշտ զատ զատ ուսումնասիրել, որ կարելի լինի կատարելապէս ըմբռնել դրանց։ Ջոկելով այդ երկու գիտութիւնները պ. Տիգրանեանցը պէտք է իր պարտքը համարէ տպագրել նմանապէս և ֆիզիոլոգիայի մէկ կարճառօտ դասագիրք հայոց ուսումնարանների համար, որով պ. բժիշկը լըբացրած կը լինի դասատուութեան համար գիտութեան մի շրջան, որ անչուշտ հարկաւոր է գիտենալ ամենայն ուսումնասէր մարդու։

Տիգրանեանցի դասագրքի մէջ մարդու կազմուածքն այնպէս է նկարագրված, որ ընդհանուրից անցնում է դէպի մանրամասնութիւնները։ Այդ ձևով հեշտացվում է մանրամասնութիւնների ըմբռնելը։ Այդ դասագիրքը, մեր կարծիքով, լիակատար է, նաև նկարագրված է նրա մէջ ամենահասկանալի կերպով մարմնի մի քանի հարկաւոր գործարանների միկրոսկոպիական կազմուածքը։ Բժիշկը բաղդաւորապէս արհամարհելով ընդունված հին նախապաշարմունքը, նկարագրել է և սեռական անդամների կազմուածքը, որ նմանապէս, մեր կարծիքով, անհրաժեշտ է գիտենալ իւրաքանչիւր մարդու, որովհետև այդ գործարանները շատ ծանրակշիռ դեր են խաղում կեանքի մէջ և պէտք է ուսուցանվին առանց նախապաշարմունքի, ի հարկէ միայն վերին դասատներում։ Եթէ ուսումնասիրում ենք թոքը, սիրտը, ստամոքսը,—ինչի նոյնպէս չուսումնասիրենք և սեռական անդամները։

Հեղինակը գրել է այդ գիրքը այն ընդարձակութեամբ, որ ի հարկէ և Էջմիածնի ճեմարանում և Ներսիսեան դպրոցում կարելի լինի գործադրել նրան, իսկ համառօտելով կարելի է գործադրել նրան և մեր միւս ուսումնարաններում։

Դասագրքի միակ, բայց խոչոր պակասութիւնն այն է, որ չունի իր մէջ առլաս (պատկերներ)։ Բայց և այն էլ պէտք է ասենք թէ չը կայ հայերէն լեզուով ոչ մի դասագիրք անատոմիայի, որ առլասով լինէր։ Այդ տեսակ դասագրքի մէջ պէտք է լինի կամ ընտիր առլաս կամ թէ բոլորովին առլաս չը լինի, որովհետև վատ նկարներից բան հասկանալ սովորողի համար անկարելի է։ Պ. բժիշկը երևի զգալով առլասի պակասութիւնը և անկար լինելով պատկերազարդ տպագրել իր այդ գիրքը։ Դրել է հայերէն տեխնիկական խօսքերի մօտ դրանց լատիներէն նշանակութիւնը, որպէս զի ուսանողը կամ ուսուցիչը կարողանայ այդ գիրքը կարդալուս օգուտ քաղել եւրոպական պատուական առլասներից, իսկ այն պարոնների համար, որոնք լատիներէն կամ (որ նոյն է) ֆրանսերէն տառերը չը գիտեն, կամ թէ չեն կարող հասկանալ մի որ և է հայերէն տեխնիկական խօսք, տեղաւորել է գրքի վերջում բառարան հայերէնից ռուսերէն, որ այդ պարոններին կարելի լինի օգուտ քաղել և ռուսաց անատոմիական առլասներից։ Տեխնիկական բառերը հեղինակը վերցրել է իր տպագրած անատոմիական բառարանից (1879 թ.) որ հաւաքել և մշակել է 9 տարի շարունակ։

Վերջապէս պէտք է ասել, որ Լեոն Տիգրանեանցի աշխատանքը նպատակայարմար է, լեզուն պարզ է, և գիտութիւնը նկարագրած է հասկանալի ձևով։

Խորհուրդ ենք տալիս մեր բնագէտ ուսուցիչներին ձեռք բերել և ծանօթանալով այդ գրքի հետ, յարմարեցնել և փոքր ուսումնարանների համար, պահպանելով դասատուութեան ժամանակ ցուցական ձևը, որ հեշտացնում է այդ կարևոր առարկան ուսուցանելը և հասկանալը։

«Մարդակազմութիւն հայոց ուսումնարանների համար», գիրքը բաղկացած է 123 երեսից (որոնցից յառաջաբանն է 12 երես, մարդակազմութիւնը 84 ե. և բառարանը 27 ե.)։ Գինն է 50 կոպ., ծախվում է Թիֆլիզում կենտրոնական դրավաճառանոցում և Երևանում հեղինակի մօտ, որին դիմել կարելի է հետեւեալ հասցէով. Эривань, городовому врачу Тигранянцу։

Յօդուածի վերջում հարկաւորութիւն ենք համարում աւելացնել, որ մենք մեր կարողութեան չափ գնահատեցինք մեր հեղինակի աշխատութիւնը։ Եթէ, պատահմամբ, մի քանի սխալ ենթադրութիւններ արեցինք գրքի այս կամ այն մասի վերաբերմամբ, պատրաստ ենք տպագրել նոյն իսկ հեղինակի պատասխանը մեր լրագրի էջերում։

Ա.